



## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԵՎ ՔԱՐՈՉ ՄԱՅՐԷՏԱՃԱՐՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹՅՎ

Հոկտեմբերի 8-ին, կիրակի օրը, Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ նշվեց Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեդարձը:

Հայրենի աշխարհի ոսկե աշնան գեղեցիկ, պայծառ և ջերմ օրերից մեկն է, սրտերը լիքը հրճվանքով, կենսունակությամբ:

Առավոտ կանուխ, հավատացյալների խմբեր ուխտի են գալիս Հայրենի աշխարհի մոտիկ և հեռավոր շրջաններից Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Վանքի շրջափակում տոնական օրերի հանդիսություն և ուրախություն է տիրում:

Մայր Տաճարը զարդարվել է տոնականորեն: Զանգերը հնչում են հանդիսավոր և վեհ:

Առավոտյան ժամը 11-ին Մայր Տաճարում սկսվել է հանդիսավոր սուրբ պատարագը: Օրվա տոնի բարեբաստիկ առթիվ պատարագ է մատուցում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, որը եկել է հանուն իր թեմի ժողովրդի և ազգային-եկեղեցական իշխանությանը մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեդարձի հանդիսություններին, իր հետ բերելով նաև իր ժողովրդի հավատարմության, սիրո և երախտագիտության տուրքը առ ոտս Հայրապետական Գահի:

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնա-

կան անձնավորություններ, հյուրեր, ուխտավորներ, հրավիրյալներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Սիրիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և Ֆրանսիայից: Մայր Տաճարը լիքն է նաև հավատավոր, աղոթանվեր ուխտավորներով:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար, ուր Մայր Աթոռի երգչախումբը, երիտասարդ խմբավար Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ, կատարում է պատարագի երգեցողությունը:

Պատարագիչ սրբազանը, Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեդարձի առթիվ, «Հայր Մեր»-ից առաջ խոսում է հետևյալ բարոգը.

«Քանզի ի վերայ Առոյն և էջմիածնի ավենայն Ազգն Հայոց կապեալ կայ»:

Սիրեցյալ և բարեպաշտ ժողովուրդ հայոց: Այսօր հոգեկան մեծ հրճվանքով կտոնախմբենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Թեմություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի հայրապետական օծման և գահակալության երջանիկ տարեդարձը:

Անցյալ վեց տարիներու ընթացքին, շնորհիվ Նորին Ս. Թեմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերադարձավ իր հին և մեծ փառքը, և հաշս հայ ժողովուրդին վերագտավ իր հմայքը և իր վեհությունը, և բովանդակ հայ ժողովուրդը, ցրված ի սփյուռս աշխարհի, սիրով, հույսով և հավատքով իր աչքը դարձուց դեպի Հայրենի Երկիրը և

դեպի Ս. էջմիածնի Մայր Աթոռը: Ենթահիվ նորին Ս. Օծուխյան, Մայր Տաճարը վերանորոգվեցավ շքեղորեն: Վերակառուցվեցան միաբանական թաղերը և այսօր հիմնովին վերանորոգության մեջ է նոր Վեհաբանը: Վեհափառ Հայրապետի ջանքերով աշխարհի ամեն կողմեն բարեպաշտ հայեր, սիրով և առատաձեռնությամբ, մասնակցեցան Հայրենի Երկրի մեր պատմական վանքերու և սրբատեղիներու վերանորոգության նվիրական աշխատանքին:

Ս. էջմիածինը այսօր վերագտած է իր վաղեմի հմայքը և փառքը: Ու մենք երջանիկ ենք տեսնելով հոգևոր այն վերածնունդը, որ ստեղծված է Մայր Աթոռեն ներս, շնորհիվ նորին Ս. Օծուխյան ու մասնավորաբար Հոգևոր Ճեմարանի սաներուն ու աշակերտներուն, որոնք կվայելեն Վեհափառ Հայրապետի հայրական հոգածությունը, սերը և խնամքը:

Արդարև, Ս. էջմիածին դարերով եղած է հայ ժողովուրդի հավատքի, լույսի փարոս: Եվ պանդուխտ հայ ժողովուրդը ցրված է ի սփյուռս աշխարհի, իր ակնարկը դարձուցած է դեպի Հայրենի Երկիր, դեպի սեզ Մասիս, Վեհափառ Արարատը ու Ս. էջմիածին: Ինչպես որ արևածաղիկը իր դեմքը կդարձնե արևին, անկե ստանալու համար կենսատու ճառագայթներ ապրելու և աճելու համար, նույնպես և Սփյուռքի հայ ժողովուրդը իր աչքն ու ակնարկը դարձուց դեպի Հայրենի Երկիր, դեպի Ս. էջմիածին և անկե ստացավ վերանորոգության և կենսունակության ներշնչում և հավատք: Եվ այսօր, դարեր վերջ, Աստուծո ողորմությամբ, Հայրենի Երկրին մեջ սկսած է վերածնունդի և վերածնության, ծաղկումի նոր շրջան մը: Այսօր Հայրենի Երկրին մեջ կծաղկի հայ մշակույթը, այսօր Հայրենի Երկրին մեջ մեծ նվաճումներ կատարված են ոչ միայն գեղարվեստի և գրականության մարզերուն մեջ, այլ նաև ճարտարարվեստի և շինարարական մարզերուն մեջ: Եվ այսօր նույնպես Ս. էջմիածին, Մայր Աթոռը, հոգևոր վերածնունդի նոր շրջան մը կապրի շնորհիվ մեր առաքինազարդ Վեհափառ Հայրապետին:

Արտասահմանի հայ ժողովուրդը ակնարկը դարձուցած է դեպի Մայր Հայրենիք և Ս. էջմիածին, որովհետև պատմական ճշմարտություն է, թե հայ ժողովուրդի արմատները զորավոր տնկված են Հայրենի Հողին մեջ, ինչպես որ ծառ մը չի կրնար ապրիլ առանց արմատներու, նույնպես նաև ժողովուրդը մը չի կրնար ապրիլ առանց Հայրենի Երկրի, առանց իր արմատներուն, որոնք տնկված են Հայրենի Հողին մեջ:

Հայկական ծառը, «Միրանի ծառ»-ը միայն Հայկական Հողի վրա կբուսնի և համեղաճաշակ պտուղներ կուտա: Հայ ժողովուրդը ցրված է ի սփյուռս աշխարհի, ամեն կողմեն ակնկառույց կնայի Հայրենի Երկրին և Մայր Աթոռ Ս. էջմիածին: Կնայի, անկե ստանալու համար հոգեկան սնունդ, ներշնչում և հոգևոր առաջնորդություն:

Մեր ժամանակները այլևս նոր դարերու ժամանակներն են: Նոր շրջաններու մեջ կապրի բովանդակ մարդկությունը և աշխարհքը, պետք է ըսել, որ հակառակ իր գիտական հառաջդիմության, հոգևոր-բարոյական տագնապի մեջ կապրի, որովհետև գիտությունը մեծ նվաճումներ կատարած է գիտական մարզերուն մեջ, և աստմական ուժի ահեղ զորություններու տիրացած է, որոնք կրնան աշխարհքը կործանել: Եթե մարդկությունը չկրնա հակադիմել բնական այդ ուժերու:

Սակայն մենք կհավատանք, թե մարդկությունը բոլոր ուժերը պիտի գործածե խաղաղության և ժողովուրդներու հառաջդիմության և երջանկության համար: Նոր ժամանակները նոր պահանջներ և պարտադրություններ կդնեն նաև Եկեղեցիին վրա: Մարտահրավեր կա նաև Հայ Եկեղեցիին: Արտասահմանի հայությունը հոգևոր առաջնորդություն, ներշնչում և ղեկավարություն կակնկալե Մայր Աթոռ Ս. էջմիածին: Եվ մենք ուրախ ենք, որ առաքինազարդ Հայրապետը, գիտակից իր սրբազան և վսեմ պաշտոնին, հայրապետական ցուպը իր ձեռքը առած, այցի ելավ իր պանդուխտ զավակներուն, մինչև հեռավոր Ամերիկաները, առաջին անգամ ըլլալով, և տարավ Ս. էջմիածին լույսը և հավատքը, իր հայրապետական օրհնությունները, և հմայեց ոչ միայն մեր պանդուխտ ժողովուրդը ցրված ի սփյուռս աշխարհի, այլ նաև տեղացի ժողովուրդները, որոնք Անոր մեջ տեսան Քրիստոնեական Եկեղեցվո մեծ առաջնորդներն և մեծ հայրապետներն մինչև Եվ Ան իր անձին հմայքովը, իր խոսքի ազդեցությամբ, իր կարի հայրական նկարագրով, առինքնեց և հմայեց բովանդակ գաղութահայ ժողովուրդը և ահավաստիկ այսօր, վից տարիներ վերջ, թե՛ Հայրենի Երկրին մեջ և թե՛ արտասահմանի մեջ, բովանդակ հայ ժողովուրդը ցնծությամբ և ուրախությամբ կտոնախմբե նորին Ս. Օծուխյան գահակալության վեցերորդ տարեդարձը:

Եվ կաղոթենք ամենքս միասին բարերարին Աստուծո, որպեսզի երկա՛ր, շատ երկար տարիներ պարգևե նորին Ս. Օծուխյան: Կաղոթենք ամենքս միասին, որպես-

զի Տեր Աստված անշարժ և անսասան և հաստատուն պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Կաղոթենք, որպեսզի Աստված պաշտու և բարեկարգ պահե Հայ եկեղեցին: Կաղոթենք ամենքս միասին, որպեսզի Աստված երկար կյանք պարգևե մեր Վեհափառ Հայրապետին, որպեսզի Ան երկար տարիներ հայրապետական Իր իմաստությամբ առաջնորդե Հայ եկեղեցվո բանավոր հոտը, ցրված ի սփյուռս աշխարհի: Կաղոթենք ամենքս միասին, որպեսզի Աստված բովանդակ աշխարհին, բոլոր ժողովուրդներուն պարգևե տևական և մնայուն խաղաղություն:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեւեանդ»: Ամեն»:

Սուրբ պատարագի վերջավորության, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի ողջ միաբանությամբ, Իշման Ս. Սեդանի առաջ նախագահում է Հայրապետական մաղթանքին:

Հավարտ սուրբ պատարագի, Նորին Ս. Օծովութունը, ամպշովանու տակ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մաղկյա դահլիճ, Իր գահակալության վեցերորդ տարեդարձի առթիվ, ընդունելու Իրեն ուղղված սրտագին և ջերմ շնորհավորություններն ու բարեմաղթությունները:

Մաղկյա դահլիճում, հանդիսության ժամանակ, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Ս. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբանության և գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ հանուն Հոգևոր Զեմարանի, պրոֆ. դոկտ. Ա. Առաքելյանը հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց երիտասարդ առաջնորդը, հանուն իր թեմի ու ժողովրդի, ջերմ և սրտագին խոսքերով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեդարձը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանի և իր անունից, անկեղծ արտահայտություններով շնորհավորում է Վեհափառ Հայրապետի տոնը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, Մաղկյա դահլիճի հայրապետական Իր Գահի վրայից, տալիս է Իր օրհնություններն ու պատգամը Իր գահակալության վեցերորդ տարեդարձի առթիվ: Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետի պատգամը ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից.

«Ահա արդեն վեց տարիներ անցան այն օրեն, երբ ծուկի եկած Փրկչի Իշման Ս. Սեդանի առաջ, ծառայության Մեր ուխար կատարեցին և աղոթեցին, որ Տեր Մեր տկար ուժերը անցեն, և առաջնորդե Մեր ֆայլերը՝ ի շինություն մեր Ս. եկեղեցվո և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովուրդին:

Մենք երջանիկ ենք, որ այս վեց տարիներու ընթացքին, նպաստավոր պայմաններ ստեղծվեցան Մեր շուրջ, և Մենք, Մեր գործակիցներու հետ միասին, կարողացանք կենսագործել Մեր ծագիրները հոգևոր, ազգային և շինարարական աշխատանքներու ուղղությամբ:

Այս առթիվ, առաջին հերթին Մեր երախտագիտությունը պետք է հայտնենք մեր Մայր Հայրենիքի պետական իշխանությանը, որոնց լայն բարյացակամությունը վայելեցին միշտ, Մեր գործունեությանը ընթացքին: Մեր սրտեն բխած ամենաջերմ աղոթքն է, որ շեն ու բարօր մնան մեր վեհածնած երկիրը և մեր հարազատ ժողովուրդը, որ անոնք գորանան ու ծաղկին, մեր հայրենի կառավարության ազգանվեր դեկավարության ներքև, խաղաղության մեջ:

Արդարև խաղաղությունը կենսական պայման է նաև Հայ Հայրենիքի և հայ ժողովուրդի կյանքին և երջանկության համար: Այս տարի հունիսին, երբ Պրագայի Համաբնական համաշխարհային համաժողովին Մեր խոսքը ըսին հոգուտ աշխարհի խաղաղության և ընդհանուր զինաթափման, Մենք ավելի քան երեք խոր զգացումը ապրեցանք, թե ի՞նչ որ Մեր խոսքը կբխե համայն հայ ժողովուրդի սրտեն:

Մենք, մեր եկեղեցին, մեր ժողովուրդը միշտ և անդադար պիտի աղոթենք և պիտի աշխատենք, որ ամեն տեղ բարձր և հզոր հեղինակալության երկնառաք պատգամը:

Մեր շնորհակալությունը նաև Մայր Աթոռիս Կերագույն Հոգևոր Խորհուրդին, միաբանության և պաշտոնության, որոնք տվի և գիշեր, իրենց նվիրված աշխատանքով, թե ու թիկունք կհանդիսանան Մեզի, Մեր ծագիրներու և առաջադրանքներու իրականացման նախապահին վրա:

Կոնունակության և երախտագիտության անկեղծ խոսք կուղղենք նաև մեր նվիրապետական բոլոր Աթոռներուն, մեր բոլոր թեմակալ առաջնորդներուն, արտասահմանի մեր ազգային-եկեղեցական իշխանությանը, Մայր Աթոռիս նվիրատուներուն և համայն մեր հավատացյալ ժողովուրդին, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որոնք բոլոր իրենց սիրով և հավատարմությամբ դեպի Ս. Էջմիածին, անվերապահորեն Մեր կողմին են և իրենց կենդանի խոսքով և



գործով, և իրենց լուսաներով կսատարեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի սրբավայրերում վերաշինության սուրբ գործին:

Ստեղծված այս բարի պայմանները և իրողությունները և այս վեց տարիներում ընթացին ձեռք բերված արդյունքները զՄեզ խորապես կմխիթարեն և Մեզ նոր եռանդ ու նոր հույս կենեղենք դեպի մեր Նկեղեցիին ու Ազգին ապագան:

Մեր Ազգի և Մեր Ս. Նկեղեցիի ապագան, այո՛, Մենք կտեսնենք ապահով և լուսավոր: Եվ ինչո՞ւ այդպես պիտի չըլլար, քանի որ այստեղ Մենք կանգնած ենք Մեր Մայր Եկեղի հողին վրա, երկնազարմյա աստվածապառույց այս կամարներում ներքև, մեր միակամ ու ինքնավար ժողովուրդի հետ միատեղ, որ կապրի, կանի ու կհառաքդիմե հայոց վառ ու կենսատու արևին տակ, խաղաղ ու երջանիկ:

Մենք ամենաբախտավոր հայրապետներ են մեկն ենք, որ մեր օրերում կտեսնենք հիացումի արժանի նվաճումները մեր ժողովուրդին և զմայլելի վերելքը մեր վերածնած Հայրենիքին, որում քառասունամյակը այնքան փառավոր կերպով, այնքան արդար հպարտաճանկ և այնքան վառ հույսերով տունեց հայ ժողովուրդը անցյալ մայիսին:

Մեր լավատեսությունը կրիսի մեր օրերում այս նշմարիտ իրողություններ, որ ոչ պատահա՞ն է, ոչ երազ, և ոչ ալ լույ կարծիք:

Եվ տակավին ավելին, իրենց սուրբ հավատով և իրենց սիրով Մեր կողքին են նաև մեր Նկեղեցվա բոլոր ուխտապան սպասավորները և բոլոր Մեր հոգևոր զավակները ամբողջ աշխարհի մեջ, Ս. Էջմիածնի օրհնության ներքև:

Հայ ժողովուրդի գանգվածները, ուր որ ալ գտնվին անոնք աշխարհի վրա, իրենց հալացր հառած կպանեն դեպի քրիստոսակերտ Մայր Աթոռը ամենայն հայոց, դեպի հրաշագործ Աթոռը Ս. Լուսավորչի: Եվ այս՝ ավելի քան հազար և վեց հարյուր տարիներն ի վեր:

Ժամանակները կփոխվին, կփոխվին կյանքի պայմանները, մարդիկ և սերունդներ շարան-շարան կուգան ու կերթան, սակայն հայ կյանքի մեջ կմնա մեկ, անսասանելի և փրկարար ոգեկան նշմարություն, որ իբրև լուսատու ջան կփոխանցվի սերունդն սերունդ:

Մեր կյանքի այդ մեծ նշմարությունը՝ հայ հավատացյալ ժողովուրդի սուրբ հավատքն է և հավատարմությունը դեպի ամենայն հայոց Ս. Էջմիածին: Այս նշմարության լույսին տակ է որ ապրած է, կապրի և պիտի ապրի Հայաստանյայց Ս. Նկեղեցին:

Այս ոգեկան նշմարությունը անգամ մը ևս խորապես զգացինք և Մեր աշխարհում տեսանք և կարծեմք Մեր ձեռքերով իսկ շուրջակեցիք, իբրև նշուրականագած իրականություն, անցյալ հուլիս ամսին, Ստամբուլի Հայ Նկեղեցվա և հայ հավատացյալ ժողովուրդի ծոցին մեջ, ուր կգտնվեինք, ինչպես գիտեմք, շատ տխուր առիթով մը:

Միայն անոնք, որ այդ օրերում այնտեղ գտնվեցան, գիտեն, քե ինչ պատանեցյալ Ռաֆորի փիերում, հայոց սրտերում աշխարհեն ենք: Գուցե ավելի քան երբեք հայտնվեցավ, իր հրաշալի ձևերում մեջ, հայ հավատքին նշմարությունը, հայոց հավատարմության նշմարությունը դեպի Ս. Էջմիածին:

Այդ նշմարության գործության և տևականության մեջ է հայ ժողովուրդի կյանքի գաղտնիքը, և ապագայի բոլոր մեր հույսերում իրականացման գրավակներ: Հետևաբար, անա քե ինչու արդարացի է Մեր լավատեսությունը, անա քե ինչու իզուր չեն Մեր նիգերը՝ վերաշինելու և ծաղկեցնելու մեր Սրբություն Սրբոց Էջմիածինը, և իզուր չէ Մեր աշխատանքը՝ Ս. Էջմիածնի լույսը տանելու և բաշխելու բոլոր հայերում:

Միեկի՛ հավատացյալներ Մեր, ուր որ ալ գտնվիք, բացե՛ք Ձեր հոգիները այդ լույսին առջև, Ս. Էջմիածնի աստվածային լույսին առջև, և քաջ գիտեմք, քե ա՛յդպես և միայն ա՛յդպես է, որ պիտի գործնա՞նք և պիտի ապրիք, մանավանդ հեռավոր աստղերում տակ:

Ինչպես Մեր երջանկանիշատակ նախորդները, այնպես և Մենք կրդձանք և պատվիր կուտանք Ձեզի բոլորիդ, սիրեցյալ զավակներ Մեր որ ի սփյուռս աշխարհի, որ ամուր փարած մե՞նք Ձեր նախնայց սուրբ հավատքին, և հավատարիմ՝ այդ սուրբ հավատքի աղբյուր, աստվածապարզ, սրբազնասուրբ և հավերժական Ս. Էջմիածնին:

Մենք կրդձանք և նույն ջերմությամբ պատվիր կուտանք նաև Ձեզի բոլորիդ, որ մե՞նք պարկեշտ, օրհնապան և շինարար քաղաքները Ձեր երկրներում, առանց երբեք առիթ տալու, որ ձեր Նկեղեցիին և ձեր համայնեցյալին ազգային կյանքին վրա որևէ ստվեր իջնե այդ տեսակետեն:

Մեր սիրտը վշտով կլեցվի, երբ արտասահմանյան մամուլեն կտեղեկանանք, քե նման երևույթներ կդրսևորվին երբեմն, երբ մեր Ազգին զավակներեն ոմանք, այս կամ այն հյուրընկալ երկրին մեջ, անհեռատես և անպատասխանատու արարքներ կգործեն, Հայ Նկեղեցիին և հայ համայնքին վրա հրավիրելով սովալ երկրի ժողովուրդի և իշխանության դժգոհությունը:

Արտասահմանի մեջ Հայ Նկեղեցին և հայ ժողովուրդը պետք է հեռու մնան միջազգա-

յին ֆաղափական կյանքի ոլորտներեն և ապրին իբրև կրոնական համայնքներ և զբաղին իրենց հոգևոր և մշակութային ներքին հարցերով միայն:

Մնացածը ուժերու զուր վատնում է, ինքնախաբեություն և մանավանդ վտանգավոր և վնասաբեր, քե՛ մեր Եկեղեցիին և քե՛ մեր Ազգին համար:

Անցյալի դառն փորձությունները կխորհինք քե քավական են այլևս, որպեսզի մեր ժողովուրդի զավակները ըլլան ավելի իմաստուն, ավելի շրջահայաց և ավելի հեռատես:

Ցավով պետք է հաստատենք, քե սփյուռֆանայ կյանքի և Եկեղեցվա ծոցին մեջ բացված փոքրիկ նեղվածքը ևս, առիթ տվավ որոշ անկարգություններու և վատառողջ երեւոյթներու, որոշ հայ գաղութներու մեջ: Մեզ և բոլորին ծանօթ են այն միջոցները, որոնցմով Անքիլիասի շուրջ խմբված ուղեկորույսներ փորձեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բաժնել Հունաստանի և Պարսկաստանի Մեր հավատացյալ և Մեզի հավատարիմ ժողովուրդը:

Մեզ ծանօթ է նաև տխուր և վտանգավոր գործունեությունը մանավանդ Պարսկաստանի մեջ գործող Անքիլիասէն ուղարկված ինքնակոշ ֆանի մը հոգևորականներու:

Տանն Կիլիկիո անուումով գործող՝ Անքիլիասի Աթոռին պարտադրված է տխուր դեր մը, գաղութահայ Եկեղեցական կյանքին մեջ, այն է՝ հայ հավատացյալ ժողովուրդը արվեստական և բռնի կերպով հեռու պահել իր հավատքի կեդրոն Ս. Էջմիածնէն և նույնիսկ ատել գայն:

Այս բոլոր վատառողջ ու Եկեղեցաֆանդ երևույթները արդյունք են միևնույն մոլորություններուն, անպատասխանատու կերպով միջազգային ֆաղափական կյանքի ոլորտներուն մեջ խաղեր կատարելու միևնույն փորձերով, որոնք հայ կյանքի տեսակետէն բացարձակապէս զուրկ են որևէ արժեքէն և որևէ իմաստէ, այլ մանավանդ վնասաբեր են և վտանգավոր:

Բարեբախտաբար այդ բոլորը մասնակի երևույթներ են, որոնք բնավ չեն համապատասխաներ բուն Հայ Եկեղեցվա և հայ ժողովուրդի նշմարիտ մտածումներուն և զգացումներուն:

Հայ ժողովուրդը ամեն երկրի մեջ կարգապահ է, զնախառնված և շինարար տարր մըն է, իսկ Հայ Եկեղեցին հզօր և բարի այն ազգական է, որ կերաշխավորէ այս երջանիկ իրադրությունը:

Անա քե ինչո՞ւ անհրաժեշտ է, որ վերջ գտնեն անջատումներ և հակամարտություններ սփյուռֆանայ Եկեղեցական կյանքին մեջ: Անա քե ինչո՞ւ անհրաժեշտ է, որ Անքիլիաս վերջ տա իր հերձվածողական ընթաց-

քին և դառնա Հայոց Ս. Եկեղեցվա միութեան մեջ, իր պատմական բոլոր իրավասություններով: Ուրիշ ճանապարհ չկա նշմարիտ հայ հոգևորականի համար, նշմարիտ հայ մարդու համար:

Մեր գահակալության վեցերորդ տարեդարձը Մենք կողջունենք լավատեսությամբ և հավատով լեցուն դեսպի մեր ապագան, և անգամ մը ևս կոշ կրենք համայն մեր հավատացյալներուն, որ մեան հավատարիմ մեր սուրբ հավատքին և ավանդություններուն, մեան հավատարիմ ամենայն հայոց լուստ խորան Ս. Էջմիածնին, մեան հավատարիմ Հայ Եկեղեցվա միության կանոնին:

Այս է նշմարաւորան ճանապարհը, այս է փրկության ճանապարհը, այս է Եկեղեցաշէն ճանապարհը: Այս է մեր ճանապարհը:

Սիրելիներ և հարազատներ Մեր, այս պատմական ծաղկյա դահլիճի կամարներուն ներքե, մեր սրտերը ֆաղցրորեն հուզված են բացառիկ խոր ուրախությամբ մը, վասնզի անա ֆանի մը օրէն կպատրաստվինք տոնելու Ս. Մեսրոպ Մեծ Վարդապետի ծննդյան 1600-ամյակը, իսկ հաջորդ օրը հանդիսավոր բացումը պիտի կատարենք Մայր Աթոռիս նորաշէն տպարանին: Պատմական բացառիկ հանդիսություններ, որոնք նախատեսակը հանդիսացավ մեր այսօրվան հավաքույթը, մեր գործունեության վեցերորդ տարեդարձի առթիվ: Առանձնապէս Մենք շատ երջանիկ ենք և գոհություն կուտանք Աստուծո այս զուգադիպության համար:

Գոտեպնդված այս մտածումներով և զգացումներով, այսօր, Մեր գահակալության օրէն վեց տարի հետո, Մենք հավատացյալ մեր ժողովուրդին կխոստանանք առավել եռանդով և առավել նվիրումով աշխատիլ ու տփնիլ մեր Ս. Եկեղեցվա զորացման, միության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ամբողջական վերաշինության և փառավորման համար:

Թող Աստված իր օրհնությամբ անփորձ և ծաղկյալ պահէ պահպանէ Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը:

Թող Աստված շեն և անսասան պահէ մեր Եկեղեցվա աստվածադիր գլուխ Մայր Աթոռը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, ինչպէս և Պատրիարքական Աթոռները հայոց ի Ս. Երուսաղէմ և ի Կոստանդնուպոլիս:

«ԵՒ ԻՆՔՆ ՏԷՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՅԷ ՁԵԶ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՅԱՄԵՆԱՅՆ ԻՐՍ» և «ՄԻԹԱՐԵՍՅԷ ԶՍԻՐՏՍ ՁԵՐ, ԵՒ ՀԱՍՏԱՏԵՍՅԷ ՅԱՄԵՆԱՅՆ ԲԱՆՍ ԵՒ ԳՈՐԾՍ ԲԱՐՈՒԹԵԱՆ» (Բ Թեսաղ. Բ 16, Գ 16):

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ, ԱՅԺՄ ԵՒ ՄԻՇՏ»:

Ամեն:

Վեհափառ Հայրապետի պատգամը ունկընդրվեց խորին հարգանքով և ջերմորեն: Երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի վերանորոգված շքեղ հանդիսասրահում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը կազմակերպել էր ընդունելություն, որին ներկա եղան մոտ 120 հրավիրյալներ:

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Վարպետ Մարտիրոս Սարյանը, բազմաթիվ մտավորականներ և այլ հրավիրյալներ:

Ընդունելության ներկա էին նաև բազմաթիվ ուխտավորներ արտասահմանյան մի շարք երկրներից:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը: Մայր Հողի բարիքներով բեռնավորված սեղանների շուրջ ստեղծվեց խանդավառ, հայրենասիրական մթնոլորտ:

Վեհափառ Հայրապետի գահակալության տոնը մի անգամ ևս վերածվեց հայ հավատավոր ժողովրդի դեպի իր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի Հայրենիքը ունեցած սիրո, հրախտագիտության և դեպի Ս. Էջմիածնի արժանավոր Գահակալը ունեցած հավատարմության և որդիական հարգանքի արտահայտության վառ ապացույցի: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռն ու Աթոռակալը, Գահը և Գա-

հակալը միշտ հայ ժողովրդի զգացմունքների առաջ միաձուլվել ու կազմել են մի սրբաշունչ ամբողջություն, մի անսպառ աղբյուր ազգային-եկեղեցական արժանապատվության, հայրենասիրության, ներշնչման ու կորույթի: «Քե և պարծի այսօր Ս. Եկեղեցի»: Ս. Էջմիածնով է հպարտանում ամեն մի հայ մարդ:

Սեղանի շուրջ հավուր պատշաճի խոսքերով հանդես եկան դեղաշնորհ Տ. Սիոն, Տ. Սահակ, Տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Սուրեն Հովհաննիսյանը, պր. Վարդան Բարակյանը (Արգենտինայից), պր. Ա. Գալստյանը (Լոս-Անջելոսից) և ուրիշներ:

Հոգևոր Ճեմարանի ուսանողները, իրենց արտասանություններով և խմբերգերով, ջերմ, խանդավառ մթնոլորտ ստեղծեցին:

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնեց իր գահակալության առթիվ արտահայտված համազգային անկեղծ և ջերմագին զգացմունքների համար, օրհնեց Հայաստանյայց Եկեղեցին, Հայրենի պետությունն ու հայ ժողովրդին:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով վերջ գտավ ընդունելությունը:

